«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպություն
Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

ԱԺ պատգամավոր Իվետա Տոնոյանին

Հետք պարբերականի լրագրող Սեդա Ղուկասյանից

055814042, Ghukasyased@gmail.com

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Տոնոյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

Ըստ ԱԺ կանոնակարգ-օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետի ԱԺ պատգամավորի պարտականությունների թվում է քաղաքացիների ընդունելություն կազմակերպելը, ինչպես նաև պատգամավորի լիազորությունների շրջանակում՝ օրենքով սահմանված կարգով քաղաքացիների գրավոր առաջարկներին պատասխանելը:

Խնդրում եմ հայտնել ԱԺ վեցերորդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում քանի՞ անգամ եք քաղաքացիների ընդունելություն կազմակերպել, ի՞նչ խնդիրներով են քաղաքացիները ձեզ դիմել, արդյոք այդ խնդիրները նպաստե՞լ են ձեզ որևէ օրենսդրական նախաձեռնություն հեղինակելուն կամ գործող օրենքում փոփոխություններ կատարելուն: Խնդրում եմ հայտնել նաև, թե գրավոր ինչ առաջարկներ

եք ստացել, ովքե՞ր են ձեզ դիմել, քանիսի՞ դեպքում եք կարողացել խնդրին լուծում տալ և առհասարակ քանի՞սն են եղել այնպիսի հարցեր, որոնց լուծումը վերաբերում է պատգամավորի լիազորություններին: Հնարավորության դեպքում խնդրում եմ այդ առաջարկներից մի քանիսը կցել պատասխանի տեքստում: Եթե քաղաքացիների ընդունելությունից լուսանկարներ կան, խնդրում եմ կցել:

<u>Պատասխան</u>

Բնականաբար և՛ հանդիպումներ, և՛ նամակների պատասխաններ լինում են: Ավելին՝ փորձում ենք հնարավորինս շատ մարդկանց դիմում-խնդրանքներին լուծում տալ: Գաղտնիք չէ, որ արդեն 15 տարի գործում է «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամը, ուստի այն հարցերը, որոնք հնարավոր է լուծել հիմնադրամի օգնությամբ ուղղորդում ենք այնտեղ, այն խնդրանքներին, որոնց ի զորու եմ ինքս լուծում տալու՝ փորձում եմ իրականացնել հնարավորինս արագ: Միակ ցավալի փաստն այն է, որ այդ դիմում-խնդրանքերն այնքան շատ են, որ միայն մտածելու ու տխրելու տեղիք են տալիս:

Դիմումներն այնքան շատ են, որ թվաքանակ նշել չեմ կարող, իսկ խնդրանք-դիմումները տարբեր են՝ ուսմանը, առողջությանը, կենցաղին վերաբերվող: Օրինակ՝ ուսմանը վերաբերվող խնդրանքները լուծվել են հենց «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի օգնությամբ, որպես ապացույց կցում եմ լինք, որտեղ ռեպորտաժի տեսքով կստանաք Ձեր հարցերի պատասխանները:

https://www.youtube.com/watch?time_continue=2&v=Chts_44x1mk

Իմ ելույթներում բազմիցս նշել եմ երկրում տիրող սոցիալական վատ վիճակի մասին՝ փորձելով խոսել ժողովրդի անունից:

Շնորհակալություն հարցման համար:

Իվետա Տոնոյան